ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 56 - Ա **12 ապրիլի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ N4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի 2016թ տարեկան ծրագրին համապատասխան "Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց" պետական ոչ առևտրային կազմակերպությունում ներքին աուդիտ անցկացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ղուլոյան Հ.	-	մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի վարիչ, աշխատանքային խմբի ղեկավար
Կյուրեղյան Մ.	-	մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ
Գ.Հովհաննիսյան	-	մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

Անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի մեջ ներգրավել համապատասխան մասնագետներ և փորձագետներ:

2. Աշխատանքային խմբին՝ իրականացված աուդիտի արդյունքները սահմանված ժամկետում ներկայացնել ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ